

Մարինա Գ. Ստեփանյան

### ԽԵՑԵԳՈՐԾՎԿԱՆ ԱՐՎԵՏՄԻ ՆՎԻՐՅԱԼԸ\*

Ուուրեն Շահվերդյանի ծննդյան 110-ամյակի առիթով

2010 թվականին լրացավ Հայաստանի ժողովրդական նկարիչ Ռուբեն Շահվերդյանը ծննդյան 110-ամյակը: Իր մահվանից 30 տարի անց էլ նշանավոր արվեստագեղի անունն ամեզելողին կապված է 20-րդ դարի հայ մշակույթի հետ: Ռուբեն Շահվերդյանը մեզանում առաջիններից էր, որ խորուրյամբ զիրակցեց շրջապատող աշխարհի ճանաչողության ինքնուրույն ձևի՝ դեկորատիվ-կիրառական արվեստի հարուստ համարակորությունները և կարողացավ լուծել այդ ասպարեզում առկա բարդ խնդիրները:



Հիմնականում սյուժետային-թեմատիկ բովանդակություն և զարգացած պլաստիկ ու նկարագրումներ ունեցող նրա նոր տիպի խեցեգործական աշխատանքները՝ քանդակագործական և հարթաքանդակային կոմպոզիցիաները, հայ խեցեգործությունը դուրս բերեցին գործառնական նշանակություն ունեցող պարզ բրուտագործության ասպարեզից դեպի ժամանակակից արվեստի բարձունքները: Անշուշտ, Ռ. Շահվերդյանի մոտ էլ սկահակները, ափսեները, սափորները մնացին որպես այդպիսիք, բայց սկսեցին ծածկվել հարթաքանդակներով, իսկ նրանց մակերեսի ողորկությունը խախտվեց ծավալային գեղանկարչության լեզվի միջոցով: Հայ խեցեգործության մեջ այս քանիակագործական-պատկերագրական ուղղությունն այնուհետև յուրացվեց երիտասարդ խեցեգործներ Ն. Գաբրիելյանի, Վ. Սողոմոնյանի, Գ. Ալումյանի, Ա. Արանյանի և այլոց կողմից:

Իր անկրկնելի ոճու ունեցող Ռ. Շահվերդյանի ողջ ստեղծագործությունը այսօր մեզ է ներկայանում իրքն ավարտուն համակարգ: Նրա և՛ գեղանկարչական, և՛ կերամիկական աշխատանքները ճանաչվում են անխալ կերպով: Նախանձելի էր այն հետևողականությունը, որով Ռ. Շահվերդյանը մեկ աշխատանքից անցնում էր մյուսին՝ գրեթե առանց դադարի ու ընդմիջման: Կորուսյալ հնարավորութ-

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 27.11.2010:

յունների գաղափարը և ոխսկի դիմելու համարձակությունը անընդհատ հետապնդում էին արվեստին ինքնամոռաց կերպով նվիրված այդ անխոնջ մարդուն: Նրա խորապես ստեղծագործական բնույթ ունեցող խստապահաճության առջև նահանջում էին մյուս բոլոր նկատառումները: Արվեստի հանդեպ Ռ. Չահվերդյան-նվիրյալի դիրքորոշումը միաձուլվում էր իր կենսակերպի, աշխարհն ընկալելու և աշխատելու երանակի հետ:

Ռ. Չահվերդյանի ստեղծագործությունը նրա կենսագրությունն է, որը բաժանված է եղել Վրաստաճի ու Հայաստաճի միջև: Ծննդել է 1900 թվականին՝ Կախիերում, հայ-վրացական խառը բնակչություն ունեցող գեղատեսիլ Սղնախ քաղաքում՝ զյուղատնտեսի ընտանիքում, որը սերում էր Լոռուց այստեղ տեղափոխված Չահվերդյանների հինավորց ազնվականական տոհմից<sup>1</sup>: Հոր մահից շատ չանցած՝ մայրը երեխանների հետ միասին վերաբնակվում է Թիֆլիսում՝ ազգականներին ավելի մոտ, որտեղ Ռուբենն ապրեց մինչև 1941 թվականը:

Թիֆլիսի կախարդական հմայքը շատ բանով կանչորուցեց Ռ. Չահվերդյանի հետագա աշխատաճրների բովանդակությունն ու սյուժետային շրջանակը: Նա իր գեղարվեստական կրթությունը ստացել է Թիֆլիսի Գեղարվեստի ակադեմիային կից գեղանկարչության ու քանդակի դպրոցում: Ռ. Չահվերդյանի ուսուցիչներն են եղել Ե. Թաղևոսյանը, Բ. Ֆոգելը և Ա. Զալցմանը: Սիմյանցից տարբերվող այս նկարիչներն իրքև մանկավարժներ ինչ-որ առումով լրացնում էին մեկը մյուսին, և նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր աշակերտների սեփականությունը դարձնել իր գեղարվեստական տեսլականը: Ռ. Չահվերդյանը ուսումն ավարտեց 1924 թվականին, իսկ 1926-ից արդեն գեղարվեստական ցուցահանդեսների մշտական մասնակից էր:

1941 թվականին Հայաստան տեղափոխվելուց հետո Ռ. Չահվերդյանը պատաճեկության հուշերում ամուր կերպով տպավորված հին Թիֆլիսը դարձրեց իր ստեղծագործության գլխավոր թեմաներից մեկը: Սակայն այդ ինքնատիպ քաղաքը նկարչի մոտ ամենահին էլ մելամադնու հիշողություններ ու տխուր մտորումներ չառաջացրեց: նա հին Թիֆլիսի մասին միշտ էլ պատմում էր նրբագեղ կերպով, չարաճճիրեն և հումորով՝ գորգուրանքով վերաբերվելով այն կոնկրետ-կենցաղային միջավայրին, որին ավելի քան քածանոր էր:

20-րդ դարասկզբի Թիֆլիս իր ուրախ կինտերով, փողոցային տոների ավանդույթներով, աղմկալից տեսարաններով ու խրախնձներով նրան անսպառ նյութ էր տվել՝ ամենաբազմազան գեղարվեստական կերպավորումների համար: Նախաեղափոխական Թիֆլիսում քաղաքավետերի, զինվորականների, բանկիրների, շինովնիկների, դուքան-շիների, արենստավորների, կինտոնների և մանրավաճառների աշխարհի կողքին

<sup>1</sup> Չահվերդյանների ու նրանց մերձավոր ազգականներ Զավարյան-Զավիհների Վրաստաճի խորերը տեղափոխվելու պատճառների մասին տես՝ Զավարյան-Զավիհների տոհմագրությունը, Դյուսիսային Լոռու՝ Սոմխեթի հայ ազնվականության շառավիղները, «Վէն», 2009, N 2, էջ 30-46:



Նեկորատիվ խումբ: Սափորով աղջիկը, 1962: Խաղողով աղջիկը, 1965: Պափով աղջիկը, 1962:

գոյություն ուներ նաև հայտնի ու անհայտ, աղքաս և չքավոր նկարչների աշխարհը: Իսկ 1910-1920-ական թվականների սահմանագծին՝ քաղաքի պատմության մեջ բեկումնային դարաշրջանում, նրա գրկում էր հավաքվել վարպետների մի համաստեղություն, որն էլ ավելի էր պայծառացրել Թիֆլիսի յուրահատուկ գեղարվեստական միջավայրը:

Ո. Շահվերդյանը մանկությունից օժտված էր ևս մեկ բնատուր տաղանդով. աչքի էր ընկնում արտասովոր երաժշտականությամբ և ընդհանրապես՝ երաժշտական բարձր կուլտուրայով: Երաժշտության հանդեպ նրա սերն այնքան մեծ էր ու լուրջ, որ երիտասարդ տարիքում դարձավ պրոֆեսիոնալ երգիչ և իր գեղեցիկ տենորը կատարելագործեց Թիֆլիսում հայտնի երաժշտ, իտալացի Էմիլիո Վազիի մոտ: 1920-ից մինչև 1928 թվականը Ո. Շահվերդյանը մեներգում էր Թիֆլիսի օպերային թատրոնում և նույնիսկ պատրաստվում էր կատարելագործվել Իտալիայում: Ընդհանրապես՝ Շահվերդյանների ընտանիքում երաժշտությունը կյանքի անբաժան մաս էր: Նրա վաղամեռիկ հայրը՝ Խսահակը, շատ երաժշտական անձնավորություն էր, սիրում էր երգել հարազատների և ընկերների շրջանակում: Եղայրը՝ Ալեքսանդրը, դաշնակահար էր և խորհրդային նշանավոր երաժշտագետ, որի գրչին են պատկանում խորհրդային օպերայի ուսումնասիրությանը նվիրված մի շարք մենագրություններ ու ակնարկներ:

Ո. Շահվերդյանի դերասանական խառնվածքը սկզբնական շրջանում հավասարապես դյուրիխն էր մերկում տարբեր ստեղծագործական միջավայրերում, ինչը լիովին համապատասխանում էր ժամանակի գեղարվեստական կյանքի նորմերին: Հետազայում Շահվերդյանը բռնեց երաժշտությունը, որպեսզի լիովին աճանատուր լինի միայն մեկ գործի՝ ձևի, գույնի, զարդանախույզի արվեստին՝ խեցեգործությանը: Բայց բատրոնը, երաժշտությունը, գեղանկարչությունը և մարմնի ու նրա մասերի ոիքմիկ շարժումների արվեստը՝ պլաստիկան, նրա ստեղծագործության մեջ միահյուսվեցին միասնական հաճգույցի մեջ: Կարելի է համարձակութեն պնդել, որ Ո. Շահվերդյանի տաղանդը թատերական էր՝ իր խորքային էության մեջ: Ահա թե ինչու նրա գեղանկարչական կամ խեցեգործական աշխատանքներում ևս կարևոր տեղ է գտնել բատրոնը, իսկ կոմպոզիցիաներում պատկերված առարկաներին ու նարմիններին միավորող ոչ միշտ տեսանելի ոիքմերը հոգեհարազատ են երաժշտության ոիքմերին:

Սերը բատրոնի հանդեպ Ո. Շահվերդյանին ժամանակին բերել է նաև Թիֆլիսի օպերային թատրոնին կից բատերական արվեստանոց: Պատանեկության շրջանում մի շարք նկարագրումներ է կատարել Բոկկաչոյի և իր ժամանակներում մոդայիկ Դ'Ան-



Դեկորատիվ խումբ: Սահմանական միջավայրը:  
1965: Պոտպատկություն, 1974:  
Թուղումներով աղջկը, 1972:



Չայխանա, 1970:

նունիշոյի ստեղծագործությունների թեմաներով։ Երկուսում էլ նրան գերել էր իտալական թեմատիկան, մասնավորապես՝ չքնաղ Ֆլորենցիայի կերպարը։

Սերը թատրոնի հանդեպ տարիների ընթացքում շանհետացավ։ Այն արտահայտվեց Ռ. Շահվերդյանի այնպիսի թեմատիկ այուժների մեջ, ինչպիսիք են ամբողջական գեղանկարչական ու խեցեգործական շարքերում միահյուսված անվերջ «թեյախմությունները», «արևելյան շուկաները», «մրգի կրպակները»։ Նման թեմաների կրկնության մեջ կարելի է տեսնել միզանացենի խաղարկման տրամաբանությունը։ Նույնիսկ առանձին խեցեգործական արձանիկները Ռ. Շահվերդյանի մոտ հաճախ սյուժետակոմպոզիցիոն նշանակություն ունեն, ինչն արտահայտվում է ժեստի, միմիկայի և պլաստիկայի մեջ։ Ռ. Շահվերդյանը բնորդների մեջ փնտրում էր որոշակի տոհմական հատկանիշների անսովոր մարմնավորումը՝ ոչ թե պարզապես որապով նրանց տիպաժները, այլ կոնկրետ հոգեբանական տիպը։ Այդպիսի կերամիկական արձանիկները ցանկանում են կերպարներ անվանել։ Նրանցում նկատվում է բատերականացված տիկնիկայնության տարրը։ Ռ. Շահվերդյանը այնքան դյուրին ու անշաշկանդ ձևով է դասավորում նստեցնում ու կանգնեցնում յուրաքանչյուր արձանիկը, որ բվում է, թե շուտով նրանց բերանից հստակ բացականչություններ են հնչելու։ Հայտնվելով կողքին՝ նրանք չեն քարանում անտարքեր հարևանությամբ, այլ ներգրավվում են որոշակի գործողության մեջ՝ խաղարկելով առանձին էպիզոդների ու միկրոսյուժների շղթան։

Այս ակնհայտ ու անքաքույց կապը թատրոնի հետ բնորոշ է Ռ. Շահվերդյանի գորեք ողջ խեցեգործական արվեստին։ Պլաստիկ արտահայտչականության վիճարությունը է նշանավորվել նաև նրա կերտած երաժիշտների արձանիկների լայն շարքը։ Դրանք շատ են՝ այդ ինքնամոռաց թմբուկահարները, թմբուկահա-



Ակուտեղով հայուհին, 1973: Դափով հայուհին, 1967:

բուհները, դափերով աղջիկները, շվիներով ու դրույկներով հովհանքները, սագերով աշուղները: Նրանք ոչ պակաս ճկուն են, որքան պարողները և վերջինների նման ներգրավված են երաժշտության հզոր, առինքնող տարերի մեջ:

Բեմական ժանրի բնույթին հարմարվելու այս հատկանիշը նկատվում է ոչ միայն պարող ու նվազող մարդկային արձանիկների միջավայրում, այլև սկահակներում, սափորներում ու մոնակալներում, որոնք մի փոքր երևակայության պարագայում կերպարանափոխվում ու վերակենդանանում են՝ կազմելով յուրահատուկ «խեցեգործական պարախումը»: Ու. Շահվերդյանի ափսեները, սկահակները, սափորներն ու մոնակալները նախատեսված չեն գործնական կարիքների համար: Հնարավոր չեն պատկերացնել, որ նրա դեկորատիվ անորներից որևէ մեկը կարելի է օգտագործել որպես զինու կամ ջրի տարողություն կամ ել սովորական ծաղկաման՝ այնքան ուժեղ և ինքնատիպ է դրանցից յուրաքանչյուրի գեղարվեստական կերպարայնությունը: Դա վերօգտապաշտության նշան է, որը բույլ է տալիս խոսել Ու. Շահվերդյանի ոմի յուրահատկություններից մեկի մասին, ինչը ավելի ուշ լայնորեն բափանցեց ողջ հայ խեցեգործական արվեստի մեջ: Ուստի նրա աշխատանքները սկսեցին տիրաժավորվել միայն այն բանից հետո, երբ վարպետը իր արվեստի մեջ հաստատեց սեփական ինքնատիպ ոճը: Կարելի է ասել, որ Ու. Շահվերդյանի և ավագ սերնդի այլ վարպետների, օրինակ՝ Հռիփսիմեն Սիմոնյանի, Հմայակ Բղեյանի արվեստը ձևափորեց այն զսպանակի առաջին օլեկները, որոնք պասիվ վիճակից դուրս բերեցին հայ դեկորատիվ-կերամիկական արվեստը:

Ու. Շահվերդյանի սիրած թեմաներից մեկը հայ կանաց պատկերող արձանիկներն են, որոնք բավականին շատ են հանդիպում նրա խեցեգործության մեջ: Այս արձանիկների երկարացված կամ կրոացված ձևերի ու գծերի մեջ արվեստագետը պահպանում է այն ճանաչվող ներդաշնակությունը, որը բնորոշ է նրանց դասական նախատիպերին՝ վաղ անհական բասերին պատկերված և հայկական միջնադարյան նանրանկարներում հանդիպող կերպարներին: Մեծ-մեծ աշքերով հայ կանայք աշխարհին են նայում անկեղծ պարզամտությամբ: Նրանց դեմքերը դիմակի արտահայտություն են պահպանում, ինչը վկայում է կոմիկականը դյուրությամբ պատկերելու արվեստագետի ունակության մասին՝ անգամ այն պարագայում, երբ կերպարները բավականին քնարական են: Այս յուրահատկությունը զգացվում է արարողակարգային ժեստերում, արձանիկների առանձնահատուկ կեցվածքում, դեմքերի բնորոշ ոճափորման մեջ և նրանում, թե ինչպես են հայ կանայք լայն բացել իրենց անթարք աշքերը:



Հայուհին երեխաների հետ, 1970:



Հայուհին երեխաների հետ, 1970:

շեցնում են Արևելքի շրեղ սպասքը: Այս հատկանիշը բնորոշ է անցյալի վարպետների աշխարհընկալմանը, որոնք պատրաստ էին ընդունել ցանկացած կերպար, եթե այն համընկել է սեփական ճաշակին: Դա էլ ավելի է բնորոշ հնագույն արվեստներից մեկին խեցեգործությանը, որի անբաժանելի հատկանիշը օտար ազդեցություններն ընկալելու և ազգային ավանդույթների ոգով վերահմաստավորելու ունակությունն էր:

Ու Շահվերդյանի բոլոր աշխատանքներն էլ աչքի են ընկնում առինքնող ոճական ազատությամբ ու անկաշկանությամբ: Այդպիսի լեզուն հնարավոր չէ հնարել: Ուղղակի հարկավոր է զգալ ու մտածել այնպես, ինչպես մտածում ու զգում էր վարպետը: Նրա մոտեցումների քվացյալ քմահաճության թիկունքում իր կողմից մշակված կերպարների բարդ համակարգն է: Բազում տարիների ընթացքում Ու Շահվերդյանի հեղինակային իդեալը չի փոխվել, ինչը, սակայն, չի խանգարել արձագանքելու ժամանակակից դեկորատիվ-կիրառական արվեստում կատարվող շրջադարձներին ու փոփոխություններին: Դա առանձնապես վառ կերպով հանդիս էկավ Հայկական ԽՍՀ Գյուղատնտերի ակադեմիայի Արվեստի ինստիտուտին կից փորձարարական-կերամիկական արվեստանոցում Ու Շահվերդյանի աշխատանքի ընթացքում, որի հիմնադիրներից մեկը հենց ինքն էր՝ Հնայակ Բդեյանի ու Արտոն Զախմախչյանի հետ միասին:

Ուրենա Շահվերդյան արվեստագետը ողջ կյանքի ընթացքում հավատարիմ մնաց իրեն ու իր նախասիրություններին: Թվում էր, թե յուրաքանչյուր տպավորություն նրա կողմից անսխալ կերպով յուրացվում է՝ կերպավորվելով գույնի, ոփքի ու պլաստիկայի մեջ: Շրջապատող աշխարհի ընկալման շահվերդյանական սկզբունքը դրսեռվել է ամեն տեղ՝ գեղանկարչություն, քանդակագործական խեցեգործություն, կենցաղային ու եղակի սպասք, գրաֆիկական աշխատանքներ: Ստեղծագոր-

իր ստեղծագործության հիմնական մոդիվները Ու Շահվերդյանը տեղափոխել է նաև ափսեների կլոր և օվալաձև մակերևույթների, լաքավորված դեկորատիվ տուփերի կափարիչների ու պատերի վրա: Պարուիհներին, երաժիշտներին, հեծյալներին, նետաձիգներին պատկերելով ճենապակու և իրակայում կավի մակերևույթներին, Ու Շահվերդյանը նրանց ներդաշնակեցրել է ափսեների շրջագծին՝ դրանք վերածելով գեղանկարչական շրջանակների: Եվ այդ ամենն արդեն կենցաղային սպասք չէ, այլ դեկորատիվ արվեստի ստեղծագործություն:

Ու Շահվերդյանն իր կերպարները վերցրել է նաև արևելյան ժողովուրդների արվեստից: Նրա պարող արձանիկների ոիքմիկ շարժումներում նկատվում են արարական կամ հնդկական պարարվեստի արձագանքները, իսկ ափսեներում՝ սասանյան արվեստի գծերը: Անորների սրամտորեն ծոված քթիկները, պաճուճանքով զարդարված բոնակները իիր, պաճուճանքով զարդարված բոնակները պատճենագործություն է:

ծուրյան այս «լայն ինքնավարությունը» ինքնանպատակ չէր, քանզի բխում էր նկարչի կենսական փորձից և ներքին կեցվածքից:

Այդ եռանդուն մարդու ստեղծագործական շատ գաղափարներ ու ծրագրեր ուներ: Մինչև կյանքի վերջին օրը նրան չէին լրում կայտառությունն ու աշխատասիրությունը: Եվ չնայած իրեն բաժին ընկած բազում դժվարություններին, նա առանձնապես անխոնջ էր իր կյանքի մայրամուտին: Ուրեմն Շահվերդյանի կենսական բնավորությունը լիովի արտացոլվեց նրա ստեղծագործության մեջ, որն այսուհետ պատկանում է հայ արվեստի պատմությանը:

## THE DEDICATED PERSON TO THE ART OF CERAMICS

On the 110-th Anniversary of Ruben Shahverdyan

Marina G. Stepanyan



Թեյախմնություն, 1972: